410. [«ԱՐԱՔՍԻ» խմբագրության շնորհավորական հեռագրերը էջմիածին՝ Մկրտիչ Ա կաթողիկոսի անվանակոչության եւ նոր տարվա շնորհավորանքի առթիվ].- 1893, գիրք Բ, էջ 121-122.- (Ազգային հիշատակարան):

411. ԵՍՈՒՍԱԿԱՆ եւ օտար մամուլը Մկրտիչ Ա կաթողիկոսի մասին].- 1893, գիրք Բ, էջ 122-125.- (Ազգային հիշատակարան):

Կաթողիկոսի հաստատման կայսերական հրովարտակը լույս տեսնելուն

պես մի շարք պարբերականներ իրենց էջերում հոդվածներ են տպագրել նրա կյանքի ու գործունեության մասին:

Ընթերցողին են ներկայացված հատվածներ «Новое время» 1893թ. N 132-ում, «Петербургская иллюстрация» 1893թ. N 38-ում, «Всемирная иллюстрация» շաբաթերթի 1893թ. N1279-ում եւ «The Anglo L Armenian Carette»-ի չորրորդ համարում տպագրված նյութերից:

412. [«ԱՐԱՔՍԻ» խմբագրությունը հայտնում է, որ հանդեսի հաջորդ տարվա առաջին գրքում տպագրվելու է Խրիմյանին վերաբերող «Փորձ բնավորագրության Նորին Սրբության անձնավորության» հոդվածը].- 1893, գիրք Բ, էջ 125.- (Ազգային հիշատակարան):

413. ՌԱՆԳՈՒՎԻՍ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԻՅՈ. Խնդիրք: [Բանաստեղծութ.] Նոր հունարենից Հայ Արմեն.- 1893, գիրք Բ, էջ 126.- (Բանաստեղծություններ):

414. [«ԱՐԱՔՍԸ» Չիկագոյի ցուցահանդեսում արժանացել է շքադրամի].- 1893, գիրք Բ, էջ 127.- (Այլ եւ այլք):

Տես «Արաքս» 1893, գիրք Ա, էջ 201. տես նաեւ 1894-1895, գիրք Բ, էջ 3-5:

415. [«ԱՐԱՔՍԻ» խմբագրությունը ողջունում է «Նոր դարի» հրատարակության 10-ամյակը եւ նրա խմբագիր Սպանդար Սպանդարյանի հրապարակախոսական գործունեության 20-ամյա տարեշրջանը].- 1893, գիրք Բ, էջ 127.- (Այլ եւ այլք):

416. [«ԱՐԱՔՍԻ» խմբագրությունը հավաստում է Թեհրանում Անդրեաս Բեկնազարյանցի խմբագրությամբ հրատարակվող «Շավիղ» շաբաթերթի ստացումը. խոստանում է հանդեսի առաջիկա համարներից մեկում գրել իրենց կարծիքը նորաստեղծ «Շավիղի» մասին].- 1893, գիրք Բ, էջ 128.- (Այլ եւ այլք):

417. [ՓԱՐԻՋԻ հայկական գաղութը տոնել է Լուսինյանց վերջին թագավորի մահվան 500-ամյակը].- 1893, գիրք Բ, էջ 128-129.- (Այլ եւ այլք):

418. [ԴԱՐՉՅԱԼՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ հայոց եկեղեցապատկան տան անհաջող վերաշինության մասին].- 1893, գիրք Բ, էջ 129-131.- (Այլ եւ այլք):

Տես նաեւ «Արաքսի» 1893թ. Ա գրքի 199 էջը:

419. [ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ հայ ուսանողների Երեւանի սովյալների օգտին կազմակերպած երեկույթը].- 1893, գիրք Բ, էջ 132-134.- (Այլ եւ այլք):

420. **[ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ Մ.** Փափագյանի «Հնությունք հայրենյաց» ընտիր նկարների հավաքածուն].- 1893, գիրք Բ, էջ 134.- (Այլ եւ այլք):

421. **ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ** «Արաքսի» ի Պետերբուրգ.- Մեր պայմանները.- 1893, գիրք Բ, էջ 135-140.- (1894-1895).- 1897, գիրք Բ, էջ 6.- 1898, գիրք Ա, էջ 7:

Հանդեսի խմբագրությունը «Մեր պայմանները» ընդհանուր խորագրի տակ բաժանորդներին, հանդեսի աշխատակիցներին ու թղթակիցներին է դիմում որոշակի պայմանների առաջադրումով:

422. **ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆՍ** մեջ ստացված են այս հրատարակությունները: Ներկայացված է 10 անուն հայերեն, 3 անուն ռուսերեն եւ 2 անուն այլալեզու գրքերի ցուցակը].- 1893, գիրք Բ, էջ 141.- (Այլ եւ այլք):

423. «**ԱՐԱՔՍԻ**» խմբագրության մեջ վաճառվում են...: Ներկայացված է Ռաֆֆու գործերից 9 անուն, 13 անուն հայերեն եւ 24 անուն ռուսերեն գրքերի ցուցակը].- 1893, գիրք Բ, էջ 142-143.- (Այլ եւ այլք):

424. **ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՔ** «Արաքս» հանդեսի եւ արտասահմանյան գործակալությունը «Արաքսի»: Ներկայացված են այն քաղաքներն ու անձանց անունները, որոնց մոտ կարելի է կատարել «Արաքսի» բաժանորդագրությունը].- 1893, գիրք Բ, էջ 144-145.- (Այլ եւ այլք):

425. **ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ:** Ներկայացված է այն անձանց ցուցակը, որոնք 1893թ. «Արաքսի» գրքերից նվիրաբերել են ազգային տարբեր հաստատությունների].- 1893, գիրք Բ, էջ 146-147.- (Այլ եւ այլք):

426. **[ԷԶՄԻԱՆԻ** «Արարատ» կրոնական, բարոյական, պատմական, բանասիրական եւ ազգային ամսագրին բաժնեգրվելու պայմանները].- 1893, գիրք Բ, էջ 147.- (Հայտարարություններ):

427. **[Կ. ՊՈԼՍԻ** «Ծաղիկ» ազգային, գրական եւ քաղաքական շաբաթերթին բաժնեգրվելու պայմանները].- 1893, գիրք Բ, էջ 147.- (Հայտարարություններ):

428. **[ՎԻՆՆԱՅԻ** «Հանդես ամսօրյա» բարոյական, ուսումնական եւ արվեստագիտական ամսագրին բաժնեգրվելու պայմանները].- 1893, գիրք Բ, էջ 147.- (Հայտարարություններ):

429. «ARA» Agournal of literature and of Armenien politics and histori
Edited and published by D. Melik. Beglar for 12 issues, post free Dacea,
Bengal india. («ARA» գրական հանդես հայ պատմության եւ քաղաքա-
կանության.- Հրատարակություն Մելիք-Բեգլարի.- Հնդկաստան).-
1893, գիրք Բ, էջ 147.- (Հայտարարություններ):

430. [ԹԵՀՐԱՆԻ «Շավիղ» ազգային, գրական եւ քաղաքական շա-
բաթաթերթին բաժնեգրվելու պայմանները].- 1893, գիրք Բ, էջ 147.-
(Հատարարություններ):

431. [«ԱՐԱՔՍԸ» իր տառատեսակներով տպագրելու պատվերներ
ընդունելու պայմանները].- 1893, գիրք Բ, էջ 147.- (Հայտարարություն-
ներ):

432. ՐԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ԳԱՔՐԻԵԼՅԱՆՅԻ «Գյուղացիք վարուցանք
անելիս Արագածի ստորոտում» յուղաներկ կտավը վաճառելու մասին].-
1893, գիրք Բ, էջ 148.- (Հայտարարություններ):

433. [«ՀՆՈՒԹՅՈՒՆՔ ՀԱՅՐԵՆՅԱՅ» շքեղ ալբոմի վաճառքի ու
ծեռք բերման պայմանները].- 1893, գիրք Բ, էջ 148.- (Հայտարարու-
թյուններ):

434. [ԳՈՎԱԶԴԱԳԻՐ Պետերբուրգում գործող Հ. Օ. Բարիլուսովի
արեւելյան ապրանքների խանութում կատարվող վաճառքի տեսակա-
նու մասին (պարսկական գորգեր, թուրքական կահույք եւ այլն)].- 1893,
գիրք Բ, էջ 148.- (Հայտարարություններ):

435. Ս. ՄԵՍՐՈՊ ԹԱՐԳՄԱՆՉԻ եկեղեցին եւ Ս. Թովմա Առաքելոց
վանքը.- 1893, գիրք Բ, էջ 3-4.- (Հայկական ճարտարապետություն: Ընդ-
հանուր էջահամարակալումից դուրս):

436. [«ԱՐԱՔՍԻ» գեղարվեստական բաժնում տեղ գտած նկարները
/Լ. Ս.- 1893, գիրք Բ, էջ 1-7.- (գեղարվեստական - ընդհանուր էջահա-
մարակալումից դուրս):

437. «ԱՐԱՔՍԻ» այս գրքի նկարները:

Բնագրում. Տ. Տ. Սկրտիչ Ա Կաթողիկոս. նրա առաջին կոնդակի լուսապատ-
կերը; Լեւոն Զ-ի դամբարանը Փարիզում; Նորին վեհափառության Տ. Տ. Սկրտիչ
Ա-ի սուրբ օծումը; Ս. Մեսրոպ թարգմանչի եկեղեցին Օշականում; Տ. Սաթենիկ
Զմշկյան; Ն. Սրբության հանդիսավոր մուտքը Վաղարշապատ (Դադյանցի լու-

սանկարից); Հին Ջուղայի գերեզմանատունը Արաքսի եզերքում (Մարտիրոս Դադյանցի լուսանկարից);

Հայկական տեսարաններ: Մեծ Մասիսի գագաթը Արալիսից; Վարազա վանքը համանուն լեռան վրա.

Հայկական ճարտարապետություն: Թովմա Առաքելո վանքը Ագուլիսում; Սի հրաշակերտ խաչ-քար; Նորադուզի հայկական խաչ-քարերը.

Գեղարվեստական բաժին: Տիրամայրը բազմած-Ռաֆայելի; Ահեղ թուպե օվկիանոսում-Հ. Այվազովսկու; Ֆրինյան Ելեսինյան տոների-Հ. Սեմիրադսկու; Արվեստը սեր է զարթնեցնում-Պ. Թումանի; Հավատ, հույս եւ սեր-Բ. Պլոկգորստի; Խորհրդավոր համերգ-Հ. Օբերի; Համառ Ամուր-Լ. Ռուալեի; Գլխանկար-Վիլհելմ Վոլֆի; Հույն կանայք-Տիշենդորֆի:

438. «ԱՐԱՔՍԻ» 1893թ. Բ գրքի բովանդակությունը].- 1893, գիրք Բ, էջ շապկի 2-րդ եւ 3-րդ երեսներին.

1894-1895 Թ. ԳԻՐՔ Ա

439. ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ /խմբագրություն.- 1894--1895, գիրք Ա, էջ Է-Ը:

Մենք թեւ մեր հայտարարության համաձայն բացած էինք «Արաքսի» 1894թ. բաժանորդագրությունը եւ ոչ ջանք չէինք խնայած այդ տարեշրջանի գրքերը լույս ընծայելու համար, այնուամենայնիվ մեր նյութական միջոցների անձկության եւ հանդիսի ոչ կանխիկ բաժանորդագրության պատճառով անկարող եղանք հրատարակել «Արաքսը», որի համար այժմ 1894թ. բաժանորդներին մենք ուղարկում ենք 1895թ. գրքերը:

440. ԳՈՒԼԱՄԻՐՅԱՆՑ Ս. Հայկական բարենորոգումների առիթով.- 1894-1895, գիրք Ա, էջ Թ-Ժ.- (Հասարակական խնդիրներ):

Տես՝ նույն տեղում էջ 205-210 էջերում տպագրված «Սուլթանի հրովարտակը հայկական խնդրի առիթով, որ հաստատված է հոկտեմբերի 17-ին» նյութը:

441. ԿԻԼԻԿԻՈ ՄԵՋ: Ազգային կենտրոնական դպրոց հիմնելու առթիվ.- 1894-1895, գիրք Ա, էջ ԺԱ-ԺԴ.- (Հասարակական խնդիրներ):

Հայկական Կիլիկիայի վերջին թագավոր Լեւոն Լուսինյանի մահվան 500-րդ տարեդարձի առթիվ խմբագրությունը գործնական ձեռնարկության առաջարկ է դնում հասարակության առջեւ՝ հիմնադրելու համար Կիլիկիայում Ազգային Կենտրոնական դպրոց:

442. ՌՌԻՍ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ: [Հայկական խնդրի նկատմամբ].- 1894-1895, գիրք Ա, էջ Ժ Ե.- (Հասարակական խնդիրներ):

443. ԲԱԿՈՒՐԱՆ: Հայկական խնդիրն Անգլիայում.- 1894-1895, գիրք Ա, էջ 1-32.- (Հասարակական խնդիրներ):

Հանգամանորեն ներկայացված են հայկական խնդրի արձագանքներն Անգլիայում, ամենատարբեր կուսակցությունների, կրոնական եւ հակառակ դավանության ներկայացուցիչների վերաբերմունքը դեպի Սասունի կոտորածներն ու ժամանակի անգլիական մամուլի վերաբերմունքն այդ խնդրում («Թայմս», «Դեյլի տելեգրաֆ», «Դեյլի Նիուս», «Դեյլի քրոնիկլ»):

444. ԲԱԿՈՒՐԱՆ. Մի տեսություն Հայկական Կիլիկիո հարստության վրա (Լեւոն Լուսինյանի մահվան 500-ամյակի առթիվ).- 1894-1895, գիրք Ա, էջ 33-64.- 1898, գիրք Ա, էջ 17-52.- (Հասարակական խնդիրներ):

445. ՍԱՍՈՒՆ. Նրան կարագրությունը, բնակիչները եւ նոցա բարք ու վարքը.- 1894-1895, գիրք Ա, էջ 65-80.- (Տեղագրական):

Հոդվածագիրքը պատմական, տեղագրական ու աշխարհագրական բնույթի կարելուր տեղեկություններ է հաղորդում Սասունի ութ գավառակների (Վերին գավառ, Խարզանք, Սասուն, Փառանց, Շատախ, Տալվորիկ, Խուլբ եւ Խիան) մասին:

446. ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ: Իմ փերին (Շիրակի բալլադներից): [Բանաստեղծութ.].- 1894-1895, գիրք Ա, էջ 96.- (Բանաստեղծություններ):

447. ՊՈՌՇԱՆՅ ՊԵՐՃ: Որսորդ Բաղդոն: [Կեսն է իրականություն].- 1894-1895, գիրք Ա, էջ 97-113.- (Մատենագրական):

448. ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ: Իգիթ Սարդար (Զրույց գալոց օրերից. ժողովրդական մոտիվ): [Շափածո].- 1894-1895, գիրք Ա, էջ 114-116.- (Բանաստեղծություններ):

449. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Գ. քին. Սասուն: [Բանաստեղծ.].- 1894-1895, գիրք Ա, էջ 117-118.- (Բանաստեղծություններ):

450. ՉՈՔԱՆՅԱՆՅ Ա. Իմ հայրենիքը: [Բանաստեղծութ.].- 1894-1895, գիրք Ա, էջ 119.- (Բանաստեղծություններ):

451. ԱՆՈՓՅԱՆ Ո. Ծանր թախիծ: [Բանաստեղծ.].- 1894-1895, գիրք Ա, էջ 120.- (Բանաստեղծություններ):

452. ԲԱԿՈՒՐԱՆ: Ի Տեր հանգ. Մկրտիչ կաթողիկոս Կիլիկիո [Մահվան առթիվ. ներկայացված է նրա հոգեւոր եւ հասարակական գործունեության սեղմ պատկերը].- 1894-1895, գիրք Ա, էջ 121-137.- (Կենսագրական):

453. **ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ.** Գրիգորիս եպիսկոպոս Ալեաթճյան ընտրյալ ի կաթողիկոսութիւն Կիլիկիո.- 1894-1895, գիրք Ա, էջ 139-140.- (Կենսագրական):

454. **THE ARMENIAN** Crisis in Turkey, the massacre of 1894 ist antecedents and significance. By Frederic Davis Greene. [Ֆրեդերիկ Դեյվիս Գրին-Չայկական ճգնաժամն ի Թուրքիա, 1894-ի կոտորածը, նորա նախընթացները եւ նշանակությունը]:

Գրախոս. Ա.- 1894-1895, գիրք Ա, էջ 141-151. [Ա.- Չայկական հարցի մասին մի գիրք].- (Մատենախոսական):

Գրախոսված գրքի հեղինակը ամերիկացի մի միսիոնար է, որ շուրջ չորս տարի ապրել է Վանում եւ անձամբ ականատես եղել հայության կրած ճգնաժամերին: Գիրքը նվիրված է Սասունի նահատակների հիշատակին:

455. **[ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ ՆԵՐՍԵՍ** արքեպիսկոպոս].- Ի Տեր հանգ. Ներսես պատրիարքի կտակը.- 1894-1895, գիրք Ա, էջ 153-169. [Առաջաբանը, ծանոթագրությունները եւ Պոլսից ստացված թղթակցությունների հրապարակումը «Արմավիրի»].- 1894-1895, գիրք Ա, էջ 153-159.- (Ազգային հիշատակարան):

456. **[ԲԱՖՖԻ]:** Բանաստեղծի վիճակը /Զանգուցյալ Բաֆֆու անտիպ բանաստեղծություններից/.- 1894-1895, գիրք Ա, էջ 170-171.- (Բանաստեղծություններ):

457. **[ՎԵՐՋԻՆ ԱՆՅՔԵՐԻ** մասին. Չեսթերի միտինգը եւ Գլադստոնի ամբողջ ճառը.- Սուլթանի հրովարտակը հայկական բարենորոգումների մասին].- 1894-1895, գիրք Ա, էջ 172-214.- (Ընդհանուր տեսություն):

Տեսությունը նվիրված է Սասունում կատարված դեպքերին: Հեղինակի կարծիքով թուրք կառավարության վերջին տարիներին դեպի հայերը բռնած ընթացքը բերում է այսպիսի կացության. նա վճռել է հետեւել մի քաղաքականության, որի նպատակն է հայերին ոչնչացնել Հայաստանում եւ դրանով վերջ դնել անարդար իր մեռելային հանգիստը վրդովող հայկական հարցին:

Տեսության մեջ բավականին տեղ է հատկացված Կ. Պոլսի պատրիարք Մաթեոս արքեպիսկոպոս Իզմիրյանի ազգանվեր գործունեությանն ու նրա դեմ Բոջան լարած որոգայթներին:

Տեսության երկրորդ մասը նվիրված է Անգլիայի Չեսթեր քաղաքում տեղի ունեցած միտինգին, որտեղ ընդարձակ ճառով հանդես է եկել Ստեֆան Գլադստոնը: Ճառից առաջ ընթերցում են Ջեյմս Բրայսի եւ Երպուրկի ուղարկած նամակները:

458. ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ Հարյուրամյակի հիշատակին /Էմիր.- 1894-1895, գիրք Ա, էջ 214-216.- (Ընդհանուր տեսություն):

1794թ. հոկտեմբերի 16-ին հայ լրագրության սկզբնավորումը ավետող «Ազդարար» թերթի հրապարակումն է Մադրասում՝ Հարություն ավագ քահանա Շմավոնյանի խմբագրությամբ:

212 էջում տպագրված է «Ազդարարի» առաջին համարի շապկի լուսապատկերը:

459. «ՀՅՈՒՄԻՍ» ԼՐԱԳՐԻ առաջին համարի երեսը. [1863թ. սեպտեմբերից մինչև 1864թ. սեպտեմբերը Ռաֆայել Պատկանյանի խմբագրությամբ հրատարակված շաբաթաթերթի առաջին երեսի ռոտոտիպը].- 1894-1895, գիրք Ա, էջ 217.- (Ընդհանուր տեսություն):

460. ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Վեհափառ կաթողիկոսը Պետերբուրգում.- 1894-1895, գիրք Ա, էջ 219-234.- (Ընդհանուր տեսություն):

Խրիմյան Հայրիկի եւ նրան ուղեկցող չքախմբի ժամանումը Պետերբուրգ, այցը թագավոր կայսերը ու կայսրուհուն, արտաքին գործերի նախարար Իշխան Լոբանով-Ռոստովսկուն, մետրոպոլիտ Պալլադիին եւ ուրիշների:

Պետերբուրգից Վեհափառը մեկնում է Մոսկվա:

461. ԳԵՐԱՊՈՍԻՎ ԱՐՄԵՆ արքեպիսկոպոս Այտնյան [Հոգեւոր եւ գրական գործունեության 50-ամյա հոբելյանը].- 1894-1895, գիրք Ա, էջ 235:

462. [ԱՆԳԼԻԱԿԱՆ «ԴԵՂԻ ՆԻՈՒՍ» լրագրի ու նրա խմբագիր Ջոն Ռոբինզոնի հայանպաստ գործունեությունը].- 1894-1895, գիրք Ա, էջ 236-237.- (Այլ եւ այլը):

463. [ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՊՈԼՍՈՒՄ տեղի ունեցած մեծ ցույցից հետո՝ Տրապիզոնում, Բաբերդում, Էրզրումում, Երզնկայում, Խարբերդում, Դիարբեքիւրում, Մալաթիայում, Արաբկիրում, Սկնում, Կեսարիայում, Ամասիայում, Սեբաստիայում, Հալեբում, Մարաշում, Ջեթունում եւ այլ հայաշատ քաղաքներում տեղի ունեցած արյունալի դեպքերը].- 1894-1895, գիրք Ա, էջ 237.- (Այլ եւ այլը):

464. [«ԱՐԱՔՄԻ» ներկա գրքում անգլիացի մի քանի քաղաքական, հոգեւոր ու հասարակական գործիչների դիմանկարները զետեղելը].- 1894-1895, գիրք Ա, էջ 238.- (Այլ եւ այլը):

Տես «Արաքսի» ներկա հատորյակի «Նկարներ» բաժինը.

465. [ՀԱՅԿԱԿԱՆ Խնդիրների շուրջը ռուսական պարբերական

մամուլի վերաբերմունքը /«Новое время», «Московские ведомости», «Гражданин», «Свет», «Биржевые ведомости», «Неделя», «Новости», «Сын отечества», «С. Петербургские ведомости»/- 1894-1895, գիրք Ա, էջ 238.- (Այլ եւ այլք):

466. [ՌՌԻՍ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ եւ գրող Ստ. Միկլաշենսկու տաճկահայոց մասին կարդացած զեկուցումները].- 1894-1895, գիրք Ա, էջ 238-239.- (Այլ եւ այլք):

Ձեկուցումները կարդացվել են Աշխարհագրական ընկերության դահլիճում ու տնտեսագետների ժողովում: Հավաքույթներին ելույթ են ունեցել Կոստանդին Բեհրուդյանը եւ Գր. Նիկողոսյանը: Վերջինս հայտնել է այն միտքը, որ ներկայումս թուրքիայում ստեղծված իրավիճակի իսկական պատճառը Եվրոպան է:

467. [ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ տպագրական գործի ցուցահանդեսում հայերի մասնակցությունը (Էջմիածնի, «Արորի», Մալխասյանի տպարաններ եւ «Արաքսի» հրատարակություն)].- 1894-1895, գիրք Ա, էջ 239-240.- (Այլ եւ այլք):

468. [ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ կաթողիկոսը իր մեծադիր լուսանկարը նվիրել է Կարապետ Եզյանին, Լ. Մազիրյանին, Կոստանդին Բեհրուդյանին եւ ուրիշների].- 1894-1895, գիրք Ա, էջ 240.- (Այլ եւ այլք):

469. [ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ հայ ծխականների վերընտրական ժողովի արդյունքները (Սր. Հարությունյան, Միքայել Բեհրուդյան, Սիմեոն Գուլամիրյան, բժ. Վարդան Վարդանյան, Ձերոն Ձերոնյան, Էմմանուել Սուբաշի, Գրիգոր Տիգրանյան, Քերովբե Խոջալանց)].- 1894-1895, գիրք Ա, էջ 240-241.- (Այլ եւ այլք):

470. [ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ երկսեռ հայկական դպրոց բացելու որոշումը].- 1894-1895, գիրք Ա, էջ 241:

471. [ԱԼԵՔՍԱՆԴՐ 3-րդ կայսեր դագաղին հայ հասարակության Ա. Պողոս-Պետրոսի տաճարում արժաթե պսակ դնելը].- 1894-1895, գիրք Ա, էջ 241.- (Այլ եւ այլք):

472. [ՍԻՄԵՈՆ ԱՔԱՍԵԼԻՔ-ԼԱՉԱՐՅԱՆԻ Ա. Էջմիածին այցելելը, դրամական նվիրատվությունը].- 1894-1895, գիրք Ա, էջ 241.- (Այլ եւ այլք):

473. [ԿՈՒԲԱՆԻ ԷՅՍԿ քաղաքի ավագ Մարգար Սուքիասյանցի քա-

հանայական գործունեության 25-ամյակը].- 1894-1895, գիրք Ա, էջ 241-241.- (Այլ եւ այլք):

474. [1873թ. **ԵՐԵՒԱՆԻ** ջրհեղեղի ժամանակ գտնված մի ձեռագիր տոնացույցի կորուստը].- 1894-1895, գիրք Ա, էջ 242-243.- (Այլ եւ այլք):

Ձեռագիր տոնացույցը գրվել է Կաֆայում (Թեոդոսիա) Օգսենտ անունով մի կրոնավորի ձեռքով հայոց 883թ. (1434թ.): Հակիրճ տրված է ձեռագրի նկարագրությունը եւ պատմված նրա կորչելու հանգամանքները:

475. [**ԴԱՆԻԱՅԻ ԳՐՈՂ** Անդերսենի «Մայր» առակի հայերեն հրատարակության գովազդը].- 1894-1895, գիրք Ա, էջ 243.- (Այլ եւ այլք):

476. [**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ** լույս տեսնող մի քանի անուն թերթերի կարծիքը «Արաքսի» մասին].- 1894-1895, գիրք Ա, էջ 244-245.- (Այլ եւ այլք):

477. **ԽՍՐԱԳՐՈՒԹՅԱՆՍ** մեջ ստացված են այս հրատարակությունները: Ներկայացված է 18 անուն հայերեն, 3 անուն ռուսերեն եւ 3 անուն այլալեզու գրականության ցուցակը].- 1894-1895, գիրք Ա, էջ 245-246.- (Այլ եւ այլք):

478. **ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՔ** «Արաքս» հանդեսի: Ներկայացված են Ռուսաստանի եւ արտասահմանյան բոլոր այն քաղաքներն ու գործակալների անունները, որոնք կարող են դիմել «Արաքսին» վերաբերող բոլոր հարցերով].- 1894-1895, էջ 247-248, գիրք Բ, էջ 214-215.- 1898, գիրք Ա, էջ 184.- (Այլ եւ այլք):

479. **ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ** «Արաքսին» բաժանորդագրվածների կողմից «Արաքսին»].- 1894-1895, գիրք Ա, էջ 248.- (Այլ եւ այլք):

480. «**ԱՐԱՔՍԻ**» **ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ** [նամակներին].- 1894-1895, գիրք Ա, էջ 248.- (Այլ եւ այլք):

481. [**«ԱՐԱՔՍԻ»** ներկա ծավալը, նրանում տեղ գտած նկարները ու այն մեծաքանակ ծախսերը, որ արել է խմբագրությունը հատորյակի տպագրության համար].- 1894-1895, գիրք Ա, էջ 248.- (Այլ եւ այլք):

482. [**ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ** «Новости» քաղաքական, գրական եւ տնտեսական ամենօրյա լրագրին բաժնեգրվելու պայմանները].- 1894-1895, գիրք Ա, էջ 248.- (Հայտարարություններ):

483. [ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ «Виржевые ведомости» հասարակական-քաղաքական եւ գրական ամենօրյա թերթին բաժնեգրվելու պայմանների մասին].- 1894-1895, գիրք Ա, էջ 248].- (Հայտարարություններ).

484. [«ԱՐԱՔՍԻ» «Գեղարվեստական բաժինը» Այն նկարները, որ տեղ են գտել հանդեսի ներկա հատորյակում] /Լ.Մ.- 1894-1895, գիրք Ա, էջ 1-8:

Իսպանացի 15-րդ դարի նկարիչ Մուրիլիոյի «Հղումն Ս. Աստվածածնի» նկարը գտնվում է Դրեզդենի թանգարանում, 2-րդը Էրմիտաժում եւ 3-րդ օրինակը՝ Մադրիդում;

Հովհաննես Այվազովսկի - «Ատլանտյան Օվկիանոս» նկարել է 75 տարեկան հասակում, երբ ճանապարհորդել է Ամերիկա;

Հ. Սեմիրադսկի - «Աղբյուրի մոտ» կտավի մասին;

Զիխել - «Զրբեր եգիպտացի կինը» եւ «Աղքատ երաժշտուհի» կտավների մասին; Բիսսոն - «Սպասում է» - Տրված է կտավի մեկնաբանությունը; Օբեր - «Ամառը արծակուրդում»; Ռեյնոլդ /անգլիացի նկարիչ/ - «Հրեշտակների խումբը»; Զիվս /գերմանացի նկարիչ/ - «Առաջին սեր»; Տեր-Աստվածատրյան - «Հայուհին աղբյուրի մոտ»:

485. «ԱՐԱՔՍԻ» այս գրքի նկարները.-1894-1895, գիրք Ա. Բնագրում: Նորին Կայսերական Մեծություն Նիկողայոս Բ; Նորին Կայսերական Մեծություն Ալեքսանդրա Ֆեոդորովնա; Մաթեոս պատրիարք Իզմիրլյան; Անգլիացի հյուպատոսի վրանները Բաղեղում; Մուշ քաղաք; Տ. Մկրտիչ կաթողիկոս Կիլիկիո; Սիս քաղաք եւ բերդ; Տ. Գրիգորիս եպիսկոպոս Ալեաթճյան; Գլադստոն; Զեսթրի միտինգը օգոստոս 6-ին Գլադստոնը արտասանում է իր հռչակավոր ճառը տաճկահայոց օգտին; Զոն Բրայս (Հայասեր, առետրի նախարար); Սասունց հայ; «Սենտ Ջեյմս» սրահում մայիսի 7-ին տեղի ունեցած միտինգը. Արգայլի դուքսն է խոսում իբրեւ նախագահ; Սոլսբրի-արդի նախարարապետ Անգլիայի; Հայկական խրճիթ Դատվանում; Քենտըրբերի արքեպիսկոպոսը; Եօրքի արքեպիսկոպոսը; Ռոզբերի-Նախկին նախարարապետը; Քիմալըլի-Արտաքին գործերի նախկին նախարարը; Ուեստմինստրի դուքսը; Զոն Ռոբինզոն-«Դեյլի Նիուս» լրագրի խմբագիր; Վեհափառ հայրապետի հանդիսավոր ելքը Պետերբուրգի եկեղեցուց; Վեհափառ հայրապետը Թիֆլիսից մեկնում է Բաթում; Տ. Տ. Մկրտիչ Ա կաթողիկոս հայոց; Նորին Վեհափառության հանդիսավոր ելքը Նոր Պետերգոֆի կայարանից դեպի կայսեր պալատը; Վեհափառի կառքը ճանապարհին դեպի կայսերական պալատը; Վեհափառը կայսերական ապարանքից մեկնելիս; Վեհափառը Պետերբուրգի եկեղեցու գավթում; Արսեն արքեպիսկոպոս Այտնյան; Պարսկահայ երկրագործը; Կարինցի հայ աղջիկը; Ջեթունցի; Հայ գեղեցկուհի; Բջնու բերդի ավերակները; Աշտարակ գյուղի կամուրջը; Տեսարան Կիլիկիայից; Տեսարաններ եւ տիպեր: Հին-Ջուղայի ավերակները Արաքսի եզերքում; Կտուց անապատի ընդհանուր տեսարանը; Հայ ուխտավորների նավակը Վանա ծովում Աղթամարի եզերքում; Արգինայի ծորը; Դավիթ Բեկի բերդը; Նախավկա վանքի ուխտավորների փախուստը Արաքս գետի վրա-

յով; Թորթումի քարափը; Ախալցխացի հայ կինը; Ալեքսանդրապոլցի հայ կինը; Երեւանցի հայ կինը; Սեւանա ծովը; Սեւանա ծովի մի մասը; Հայկական ճարտարապետություն: Որոտնա վանքը; Հայկական հին խաչքար; Գեղարվեստական բաժին Մուրիլիո-«Հղումն Ս. Աստվածածնի»; Հ. Այվազովսկի - «Ատլանտյան Օվկիանոս»; Հ. Սեմիրադսկի - «Աղբյուրի մոտ»; Ջիխել - «Ջրբեր ֆելլահ կին»; Ջիխել-«Աղքատ երաժշտուհի»; Բիսսոն - «Սպասում է»; Ժ. Օբեր - «Ամուրը արծակուրդուն»; Ռեյնոլդ «Հրեշտակների մի խումբ»; Ջիվս - «Առաջին սեր»; Պ.Տեր-Աստվածատրյանց - «Հայ կինը աղբյուրից դառնալիս»; Պ. Տեր-Աստվածատրյանց - «Մշեցի հայ երկրագործը դաշտում»; (Բնագրում). Գր. Գաբրիելյան - «Անիի պարիսպները»; Գր. Գաբրիելյան - «Հայ աշուղը»; Գր.Գաբրիելյան - «Հայկական սայլ»:

486. [«ԱՐԱՔՍԻ» 1894-1895թ. Ա գրքի բովանդակությունը].- 1894-1895, գիրք Ա, էջ ԳԶ:

487. [ՀՅՈՒԳՈ Վ.]: Քեզ սիրում եմ եւ պաշտում...: [Բանաստեղծութ./Թարգմ. Հայ-Արմենի.- 1894-1895, գիրք Ա, էջ շապկի 3-րդ երեսը:

488. ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ: Ես երգիչ եմ, երկնի թիթեռ...: [Բանաստեղծութ.].- 1894-1895, գիրք Ա, էջ շապկի 2-րդ երեսը. [1894-1895թ.].- գիրք Բ. 1897թթ.:*

489. [ԶԻԿԱԳՈՅԻ աշխարհահանդեսում «Արաքսի» ստացած մեդալի երկու երեսների պատկերը].- 1897, գիրք Բ, էջ 3:

490. [ԶԻԿԱԳՈՅԻ աշխարհահանդեսում «Արաքսի» ստացած մրցանակի պատճենը անգլերեն եւ հայերեն լեզուներով].- 1897, գիրք Բ, էջ 4-5:

491. ԳՈՒԼԱՄԻՐՅԱՆՅ Ս. Երկու խոսք [Պարզաբանում 1894-1895թ. Բ գիրքը 1897թ. տպագրվելու եւ ընդհանրապես «Արաքսի» հրատարակության պարբերականությունը խախտելու պատճառները].- 1897, գիրք Բ, էջ 11-12:

492. [ՔԱՂՎԱԾՔՆԵՐ «Արաքսի» մասին հայկական մամուլից («Մշակ» 1895թ. N142, «Նոր-դար» 1895թ. N215, «Արծազանք» 1895թ. N141, «Հանդես ամսօրյա» 1896թ. փետրվար, «Բազմավեպ» 1896թ. հունվար)].- 1897, գիրք Բ, էջ 13-14:

Բովանդ.՝ Հայ մամուլը «Արաքսի» մասին:

* 1894-1895թթ. Բ գիրքը լույս է տեսել 1897 թ.: Պարզության համար հետագայում Բ գրքի բոլոր նկարագրությունները կտրվեն 1897 թ. նշումով:

493. ՏԱՃԿԱՀԱՅ որբերի առիթով: [Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանի եւ պատրիարքարանի անելիքները որբերի վիճակը տնօրինելու խնդրում].- 1897, գիրք Բ, էջ 15-16.- (Հասարակական խնդիրներ).

494. ՄԻ ՊՏՈՒՅՏ Վանի շրջակայքում: 1897, գիրք Բ, էջ 17-25.- (Տեղագրական).

Բովանդ. Չաղար Ս. Նշանի վանքը.- Ս. Եղիշեի գերեզմանը.- Սաչան ջրվեժը Խոշապա վանքի.- Լեզկ (հարալեզ) եւ Ամենափրկչի մատուռը:

Նաեւ Եղիշեի գերեզմանը, Չաղարի Ս. Նշան, Անգղա Ս. Աստվածածին վանքերը, վերջինիս հետ կապված մի շատ հին ավանդություն:

495. ԱՐՀԵՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ /Վարդ.- 1897, գիրք Բ, էջ 26-29.- (Տեղագրական). Բուրդ եւ բամբակ գգելը: Արչկան ու չախրակ մանելը: Կտավագործությունը:

Տես 26-րդ էջի տողատակի ծանոթագրությունը:

496. ԿԻՐԱՍՈՐ /Խ. Ա. Վ.- 1897, գիրք Բ, էջ 31.- (Տեղագրական):

Ընդհանուր տեղեկություններ ծովեզրյա քաղաքի մասին (դիրք, տնտեսական կյանք, բնակչության ազգային կազմ, զբաղմունք, եկեղեցիներ):

497. ԱԿՆ ՔԱՂԱՔ. 1897, գիրք Բ, էջ 33-37.- (Տեղագրական):

Պատմական, աշխարհագրական, տեղագրական ու տնտեսական բնույթի տեղեկություններ է հաղորդում քաղաքի շրջակա գյուղերի բնակչության, նրանց զբաղմունքի, կենցաղավարության, ազգային կազմի, վարչական բաժանման, կրթական գործի ու եկեղեցիների մասին:

Վիճակագրական տեղեկություններ՝ 1895-ին քրդերի հարձակումից Ակնի կրած մարդկային ու նյութական կորուստները եւ վնասները:

498. ՏԵՐՈՅԵՆՑ ՄԱՐՏԻՐՈՍ. Բալու.- 1897, գիրք Բ, էջ 38-45.- (Տեղագրական):

Բովանդ. Ազգաբնակչություն.- Բալուի սահմանները.- Տարածությունը.- Սակերելույթի կազմությունը.- Բալուի վիճակները.- Հանքեր.- Գետակներ-Ջրվեժ. Բերքերը եւ արհեստները.- Վանքեր, դպրոցներ.

499. ԲԱՐՉՐԱՔԱՇ Ս. Գրիգորի վանքը /Տեղացի.- 1897, գիրք Բ, էջ 47-49.- (Տեղագրական):

Պատմական տեղեկություններ Մամիկոնյան տոհմի անվան հետ կապված վանքի շինության (11-րդ դար), մոտակայքում գտնվող գերեզմանատան, մատուռի խաչքարերի ու արձանագրությունների մասին:

500. ԲԱԶՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ Վ. Կայծակ.- Մի երես Աղթամարա կա-

թողիկոսության պատմությունից եւ հանգուցյալ Տ. Խաչատուր կաթողիկոսի գահ բարձրանալը.- 1897, գիրք Բ, էջ 51-61.- (Կենսագրական):

501. ՊՈՂՈՍ ՎԱՐԳԱՊԵՍ ՏԵՐ-ՄԱՐԳԱՐՅԱՆ: [Մահախոսական].- 1897, գիրք Բ, էջ 63-65.- (Կենսագրական):

Հոգեւոր գործունեությունը: Հաղարծնի վանքի վանահայր:

502. ՄԿՐՏԻՉ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԹԵՐՄԵԼԵՉՅԱՆՑ: [Մահախոսական] /Տենե.- 1897, գիրք Բ, էջ 66-67.- (Կենսագրական):

503. ՄՇՈՒ ԹՈՉՈՒՆ ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄ: [Բանաստեղծութ.].- 1897, գիրք Բ, էջ 68.- (Բանաստեղծություններ):

Հեղինակը նշված չէ, շատ հավանական է, որ այն ժողովրդական ծագում ունի:

504. ՊՈՒՇՅԱՆ ՊԵՐՃ: Եկեղեցական հաշվետվություն.- 1897, գիրք Բ, էջ 69-79.- (Մատենագրական):

505. «ԿՈՎԿԱՍ» ռուսահայ անդրանիկ լրագրի հիսունամյակի առիթով.- 1897, գիրք Բ, էջ 80.- (Մատենագրական):

506. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՔՈՎՅԱՆԻ երկերը: Հրատարակեց Իսահակ Ժամհարյանցը.- Մոսկվա, 1897:

Գրախոս.՝ 1897, գիրք Բ, էջ 61-82 - (Մատենախոսական).

Ժողովածուն լույս է տեսել անմահ վիպասանի կարոտյալ թոռներին օգնելու համար:

507. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ: Շիրակի լեգենդներից եւ ժողովրդական կյանքից.- Ալեքսանդրապոլ, 1896:

Գրախոս.՝ 1897, գիրք Բ, էջ 82.- (Մատենախոսական):

Գրախոսված գրքույկը բաղկացած է 13 լեգենդներից եւ ժողովրդական կյանքից վերցրած 9 բանաստեղծությունից:

508. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՀՈՎՀԱՆՆԵՍ. Երդում: [Վեպ].- Թիֆլիս, 1896:

Գրախոս. 1897, գիրք Բ, էջ 83-84.- (Մատենախոսական):

509. ՄԻՍԻՈՆԱՐ հայր Դամիան Վեյստերի կյանքը.- Տփլիս, 1896.

Գրախոս.՝ 1897, գիրք Բ, էջ 84-86.- (Մատենախոսական):

510. ԱՅՎԱԶՅԱՆՑ ԲԱԳՐԱՏ: Տանջանքի բովից: [Վեպ].- Թիֆլիս, 1895:

Գրախոս.՝ 1897, գիրք Բ, էջ 86.- (Մատենախոսական):

511. ОРЦЗНІЗЗ 1897թ.- Հրատարակություն «Արոր» տպարանի.- Բաքու, 1896:

Գրախոս.՝ 1897, գիրք Բ, էջ 86-91.- (Մատենախոսական):

512. СКАРИКОВСКИЙ К. Внешняя политика России и положение иностранных держав.-С. П. 1897.

Գրախոս.՝ 1897, գիրք Բ, էջ 91-92. (Մատենախոսական):

Գրքի հեղինակը «Новое время» եւ «С.Петербургские ведомости» թերթերի քաղաքական բաժնի աշխատակիցն է եղել:

513. «РУССКАЯ ПОЛИТИКА в восточном вопросе».- Историко-юридические очерки Сергея Жигарева. 2 тома.- Москва, 1896.

Գրախոս.՝ 1897, գիրք Բ, էջ 92-93.- (Մատենախոսական):

514. «ВНЕПННЯЯ ПОЛИТИКА России в начале царствования Екатерины II 1762-1774гг.».- Исследование Н. Д. Чечулина.

Գրախոս.՝ 1897, գիրք Բ, էջ 93.- (Մատենախոսական):

515. «ПОЗОР ЦИВИЛИЗАЦИИ по поводу турецких дел». В. Тенишева.- С. П., 1897.

Գրախոս.՝ 1897, գիրք Բ, էջ 93.- (Մատենախոսական):

516. КОМАРОВСКИЙ Л. А. проф. Восточный Вопрос = /Կոմս Լ. Ա. Կոմարովսկի պրոֆ. Արեւելյան հարցը.- Մոսկվա, 1896/.

Գրախոս.՝ 1897, գիրք Բ, էջ 94-96.- (Մատենախոսական):

517. «СМУТНОЕ ВРЕМЯ и дворцовый переворот в Константинополе.- В. Теплова.- С видами и портретами.- С. П. 1897». (Խառն իրավիճակ եւ պալատական հեղաշրջում Կ. Պոլսում / Վ. Տեպլով.- Տեսարաններով եւ պատկերներով.- Ս. Պետերբուրգ, 1897:

Գրախոս.՝ 1897, գիրք Բ, էջ 96-98.- (Մատենախոսական):

518. «ГЕОРГИЙ XII, последний царь Грузии и присоединения ее к России.- Н. Дубровина.- Издание второе М.Б. Тер-Асатурова.- С. П. 1897»

Գրախոս.՝ 1897, գիրք Բ, էջ 98.- (Մատենախոսական):

519. ՎԱՆԻ ԱՆՅՔԵՐԸ /Վանցի.- 1897, գիրք Բ, էջ 99-126.- 1898, գիրք Ա, էջ 113-129.- (Ժամանակակից տեսություն):

Քովանդ՝ [Ներածական].- Վանի վիճակը կոտորածից առաջ.- Կոտորածի պատճառները.- Վանի կոտորած եւ մի քանի ընդդիմություններ.- Ինքնապաշտպանության կռիվը.- Վանի հյուպատոսները եւ բանակցություններ հայոց ու կառավարության մեջ.- Վան կոտորածից հետո (Կազմած 7 գլուխներից «Արաքս» 1898, գիրք Ա, էջ 113-129):

520. [ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ապրող հայ բնակչությունը ոչնչացնելու Բ դռան ծրագրի իրագործման շուրջը].- 1897, գիրք Բ, էջ 127-156.- (Ներքին տեսություն):

521. ՂԱՄԱԿ «ԱՐԱՔՍԻ» խմբագրին: Թուրքիայից Պարսկաստան անցած հայ գաղթականների վիճակը, պարսից կառավարության վերաբերմունքը, նրանց համար օժանդակություն կազմակերպելու փորձերը երկրի ներսում] /Յ.Վ.- 1897, գիրք Բ, էջ 157-158.- (Ազգային հիշատակարան):

Կարելի է ենթադրել, որ Վարդը՝ նույն ինքը Յ.Վ.- ն է:

522. [ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ հայկական եկեղեցուն մի պսակադրության մասին].- 1897, գիրք Բ, էջ 159-160.- (Այլ եւ այլք):

523. [ՊԵՏԵՐՔՈՒՐԳՈՒՄ ապրող հայերը (առելտրականներ, ծառայողներ, ուսանողներ)].- 1897, գիրք Բ, էջ 160-161.- (Այլ եւ այլք):

524. [ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ եկեղեցական կալվածների խորհրդարանի անդամների ընտրությունները.- Մայրաքաղաքի հայ եկեղեցիները, խորհրդարանի կազմը, անդամների գործունեությունը, եկեղեցիների ելեւմտից հաշիվը].- 1897, գիրք Բ, էջ 161-164.- (Այլ եւ այլք):

525. [ՊԵՏԵՐՔՈՒՐԳՈՒՄ ազգային-ժխական երկսեռ դպրոց ունենալու խնդիրը].- 1897, գիրք Բ, էջ 164-165.- (Այլ եւ այլք):

526. [ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ եկեղեցական կալվածների խորհրդարանի նիստի որոշումը 3000 ռուբլի օգնություն ուղարկել Ռուսաստան եւ Սալմաստ գաղթած հայերին].- 1897, գիրք Բ, էջ 165-166.- (Այլ եւ այլք):

527. [ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ գերմանական-ռեֆորմատորների եկեղեցուն հօգուտ տաճկահայերի տրված նվազահանդեսը].- 1897, գիրք Բ, էջ 166.- (Այլ եւ այլք):

528. [ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ հայ ժխականների՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղարկված զատկական շնորհավորական հեռագիրը].- 1897,

գիրք Բ, էջ 166.- (Այլ եւ այլք):

529. **[ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ** անվանակոչության տոնին «Արաքսի» խմբագրության հեռագիրը].- 1897, գիրք Բ, էջ 166. (Այլ եւ այլք):

530. **[ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ** տարբեր առիթներով Պետերբուրգ այցելած հայ բարձրաստիճան հոգեւորականները].- 1897, գիրք Բ, էջ 167.- (Այլ եւ այլք):

531. **[ՀԱՅՏՆՈՒՄ Է:** Հանդեսի ներկա գրքում զետեղված է Չիկագոյի աշխարհահանդեսում «Արաքսի» ստացած մեդալի արտատիպն ու մրցանակագիրը].- 1897, գիրք Բ, էջ 167.- (Այլ եւ այլք):

532. **[Լ. ՄՍԵՐՅԱՆՑԻ** դիսերտացիայի՝ «Մշո բարբառի համեմատական ուսումնասիրությունը» պաշտպանությունը].- 1897, գիրք Բ, էջ 167.- (Այլ եւ այլք):

533. **«ԿՈՎԿԱՍ»** ռուսահայ անդրանիկ լրագրի հիսնամյակի առիթով: [Տեղեկություններ երկամյա գործունեության:]- 1897, գիրք Բ, էջ 168.- (Այլ եւ այլք):

534. **[ՄԱԼՔՈՅԼՄ ՄԱԿ-ՔՈԼԻ** «Սուլթանը եւ պետությունը» աշխատությունը հայերեն տպագրելու մասին].- 1897, գիրք Բ, էջ 168-169.- (Այլ եւ այլք):

535. **«БРАТСКАЯ ПОМОЩЬ пострадавшим в Турции армянам».**- Москва, издание Г. Джаншиева = Եղբայրական օգնություն Տաճկաստանում տուժած հայերին. Մոսկվա, հրատարակություն Գ. Ջանշյանի.- 1897, գիրք Բ էջ 169-172.- (Այլ եւ այլք):

536. **[ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ** անվանի դերասանուհի տիկին Հրաչյայի մասին].- 1897, գիրք Բ, էջ 172.- (Այլ եւ այլք):

537. **[ՏԽՐԱՀՈՉԱԿ** Շաքի փաշային Ադանայի վիլայեթի կուսակալ նշանակելը].- 1897, գիրք Բ, էջ 172.- (Այլ եւ այլք):

538. **ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՆԻ** օրհնությունը: [Կատարվել է ընթացիկ տարվա սեպտեմբերի 14-ին Ս. Խաչվերացի տոնին՝ Ս. Էջմիածնում].- 1897, գիրք Բ, էջ 173.- (Այլ եւ այլք):

539. Տ. ԵՐԵՄՅԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏՅԱՆ: [Մահախոսական].- 1897, գիրք Բ, էջ 175-177.- (Այլ եւ այլք):

540. 1896-ի ԱՇՆԱՆԸ ԷԶՍԻԱԾՆՈՒՄ.- 1897, գիրք Բ, էջ 177-179.

Վանի կոտորածի պատճառով ռուսական սահմանն անցած ու էջմիածնում ապաստան գտած հայ գաղթականների վիճակը:

Նաեւ «Եւ լուսինը մեղմ փայլում էր, կաթնանման իր լույսով...» բանաստեղծությունը.

541. ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Մեծության Ս. թագադրությունը.- 1897, գիրք Բ, էջ 180-210.- (Թագադրական):

Քովանդ. Նորին Կայսերական Մեծությանց Ս. թագադրությունը.- Նորին Կայսերական Մեծությանց Ս. օծումը.- Ս. հաղորդություն.- Նորին Կայսերական Մեծությանց ելքը.- Ավստրիացոց, գերմանացոց կայսրների եւ Ֆրանսիո Զանրապետության նախագահի այցելությունները:

1896թ. մայիսի 6-ից 29-ը Մոսկվայում տեղի ունեցած թագավոր կայսր Նիկոլայ 2-րդի եւ թագուհի-կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի թագադրության հանդիսակատարությունները:

542. ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՄԻ ՔԱՆԻ թերթերից քաղվածքներ մեր լույս ընծայած «Կիլիկիա» հրատարակության մասին.- 1897, գիրք Բ, էջ 210-211:

Քաղվածքներ են բերված «Մշակ» 1896թ. փետրվար 24, N 23, «Նոր-Ղար» 1896թ. փետրվար 17, N 29, «Արծազանք» 1896թ. մարտ 17, N 32 եւ «Բազմավեպի» ապրիլյան համարից:

543. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆՍ մեջ ստացված են այս հրատարակությունները [Ներկայացված է 11 անուն հայերեն, 8 անուն ռուսերեն եւ երկու անուն օտար լեզվով գրքերի ցուցակը].- 1897, գիրք Բ, էջ 121-213.- (Հայտարարություններ):

544. «ԱՐԱՔՍԻ» խմբագրությունից. [«Արաքսի» 1898թ. տարեշրջանի առաջին գրքի մեջ մտնող նյութերը. խնդրանք «Արաքսին» թղթակցողներին; Պատրիարք Վարժապետյանին նվիրված նյութի տպագրությունը հետաձգելու մասին; «Արաքսի» մեջ տպագրված գունավոր նկարներից կազմված ալբոմի մասին; «Արաքսի» ներկա հատորյակի ծավալի ու տպագրության տառատեսակների մասին].- 1897, գիրք Բ, էջ 213:

545. ԼՃՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՆ ՄԱՍԵՀՅԱՆԻ եւ Սողոմոն Հասրաթյանի միջոցով Պարսկաստանի ազգային հաստատություններին ուղարկած «Արաքսի» եւ «Կիլիկիայի» օրինակները].- 1897, գիրք Բ, էջ 213:

546. **[ԽՆԴՐԱՆՔ «ԱՐԱՔՍԻ»** գործակալներին. փակելու համար հանդեսի 1895թ. տարեշրջանի հաշիվները].- 1897, գիրք Բ, էջ 215:

547. **[ՄԻ ԽՆԴՐԱՆՔ** նաև այն անձանց, որոնք ցանկանում են աջակցել «Արաքսի» հրատարակությանը].- 1897, գիրք Բ, էջ 215:

548. **[ՏԻԳՐԱՆ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ** «Արաքսի» մեկ օրինակ նվերը Ախալքալաքի Բարեգործական Շնչերության ճյուղի գրադարանին].- 1897, գիրք Բ, էջ 215:

549. **[ԷԶՄԻԱՇՆԻ «ԱՐԱՐԱՏ»** կրոնական, բարոյական, գրական, պատմական, բանասիրական, ազգային եւ պաշտոնական ամսագրի ԺԴ տարվա բաժանորդագրության պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 216.- (Հայտարարություններ):

550. **[ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ** «Արեւելյան մամուլ» կիսամսյա ազգային, գրական եւ քաղաքական հանդեսի 28-րդ տարվա բաժանորդագրության պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 216.- (Հայտարարություններ):

551. **[«ՔԱԶՄԱՎԵՊ»** հանդիսարան գրական, բանասիրական, պատմական, կրթական եւ գիտական ամսագրի 56-րդ տարեշրջանի բաժանորդագրության պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 216.- (Հայտարարություններ):

552. **[«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐՅԱ»** բարոյական, ուսումնական եւ արհեստագիտական ամսագրին բանեգրվելու պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 216.- (Հայտարարություններ):

553. **[«ԿԻԼԻԿԻԱ»:** Փորձ աշխարհագրության արդի Կիլիկիո գիրքալբոմը ձեռք բերելու պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 216.- (Հայտարարություններ):

554. **[«ԱՐԱՔՍ»** գրական եւ գեղարվեստական պատկերազարդ վեցամսյա հանդեսի նախկին տարիների գրքերը ձեռք բերելու պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 216.- (Հայտարարություններ):

555. **ՔԱՅՎԱԾ Է** բաժանորդագրություն Րաֆֆիի եւ վաճառվում են Րաֆֆիի այս աշխատությունները: Ներկայացված է ցուցակը].- 1897, գիրք Բ, էջ 217.- (Հայտարարություններ):

556. **ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ** մեջ վաճառվում են ... [Ներկայացված է 11 անուն հայերեն եւ 3 անուն ռուսերեն գրքերի ցուցակը].- 1897, գիրք Բ, էջ 217.- (Հայտարարություններ):

557. **Ր. ՖԵՆՈՒ** եւ ընկերության խանութի բաժանմունքները ... (դիմել ձեռք բերելու համար զանազան գրքեր, երաժշտական, դպրոցական-դաստիարակչական պիտույքներ, գրության, գծագրության եւ նկարչական իրեր, դասարանների կահկարասիք)].- 1897, գիրք Բ, էջ 218.- (Հայտարարություններ):

558. [**«НОВОСТИ»** քաղաքական, գրական եւ տնտեսական ամենօրյա թերթի բաժանորդագրության պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 218.- (Հայտարարություններ):

559. [**«С. ПЕТЕРБУРГСКИЕ ВЕДОМОСТИ»** ամենօրյա քաղաքական լրագրին բաժնեգրվելու պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 218.- (Հայտարարություններ):

560. [**«СЫН ОТЕЧЕСТВА»** քաղաքական, գրական եւ գիտական ամենօրյա լրագրին բաժանորդագրության պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 218.- (Հայտարարություններ):

561. [**«БИРЖЕВЫЕ ВЕДОМОСТИ»** հասարակական, քաղաքական եւ գրական թերթին բաժանորդագրվելու պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 218.- (Հայտարարություններ):

562. [**«МИР БОЖИЙ»** գրական, գիտական, պոպուլյար հանդեսին բաժնեգրվելու պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 218.- (Հայտարարություններ):

563. [**«СЕВЕРНЫЙ ВЕСТНИК»** գրական-գիտական եւ քաղաքական հանդեսին բաժնեգրվելու պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 218.- (Հայտարարություններ):

564. [**ԳՈՎԱԶԴԱԳԻՐ** Բրոկուր եւ ընկերություն (Մոսկվա) գլիցերինյան օճառի եւ զանազան հոտավետ օդեկոլոնների].- 1897, գիրք Բ, էջ 219.- (Հայտարարություններ):

565. [**Ա.Ի.ԱՔՐԻԿՈՍՈՎԻ** եւ որդիների (Մոսկվայում) անգլիական բիսկվիտների առեւտրական ընկերություն].- 1897, գիրք Բ, էջ 220-221.- (Հայտարարություններ):

566. [«НОВЫ» երկշաբաթաթերթին եւ նրան առընթեր հրատարակվող նույնանուն հանդեսին «Мозайка», «Литературные семейные вечера», «Полн. Собрания сочинения», «П.Н. Мелникова и Вл. Ив. Даля «Животная Россия» հրատարակություններին բաժնեգրվելու պայմանները].- 1897, գիրք Բ, էջ 222.- (Հայտարարություններ):

567. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ: [60-ամյա գործունեության տարեդարձը].- 1897, գիրք Բ, էջ 3-5.- (Գեղարվեստական բաժին):

Ծովանկարչի կենսագործունեությունը: Թեոդոսիայում հորեյանական հանդիսությունները:

568. [«ԱՐԱՔՍԻ» 1897թ. Բ գրքում տեղ գտած գեղարվեստական նկարներն ու նրանց հեղինակները].- 1897, գիրք Բ, էջ 7-10.- (Գեղարվեստական). Հովհաննես Այվազովսկու «Տիեզերք» կտավը; Հենրիխ Սեմիրադսկու «Գյուղական կյանքից» կտավը; Դիանա Կումենսի «ճիշտ գուշակություն» կտավը; Գ. Ումի «Որբիկ» կտավը; Էդուարդ Բյուսոնի «Ամմեղություն» կտավը; Կոտի «Փոթորկի միջոցին» կտավը; Հ. Բեռնարի «Սելաչյա» կտավը; Մարկոս Ստոնի «Պարտիզում» կտավը; Շահինի «Խեղճը» կտավը:

569. [ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ նոր ասպարեզ ելած հայազգի արվեստագետների մասին].- 1897, գիրք Բ, էջ 11-12.- (Գեղարվեստական):

570. [ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ երիտասարդ նկարիչ Արշակ Ֆեթվաճյանի կենսագործունեության մասին].- 1897, գիրք Բ, էջ 12-14.- (Գեղարվեստական):

571. [ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ գեղարվեստական գործերի ցուցահանդեսում հայազգի նկարիչներից մի քանիսի մասնակցությունը].- 1897, գիրք Բ, էջ 14.- (Գեղարվեստական):

Հիշատակված են Վարդգես Սուրենյանցի «Սուրբ Գայանեի վանքը» էմանուել Սահտեսյանցի ծովային տեսարանները, Թադեոսյանի «Գերեզմանատունը» եւ «Բարեկամների շրջանում» գործերն ու մի էտյուդ:

Հիշատակված է նաեւ Գեղարվեստների ճեմարանի սան Զուրաբյանի անունը:

572. [ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ լուսանկարն ու Արշակ Ֆեթվաճյանի երկու գործերի արտատիպ օրինակները].- 1897, գիրք Բ, էջ 15.- (Գեղարվեստական):

573. [ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ հրապարակավ շնորհակալություն է հայտնում Հովհաննես Այվազովսկուն իրենց նվիրած մի յուղաներկ ծո-

վանկարի համար].- 1897, գիրք Բ, էջ 15.- (Գեղարվեստական):

574. [ԻՐ ԱՐՎԵՍՏՈՒՄ կատարելագործվելու նպատակով նկարիչ Վարդգես Սուրենյանցի Իսպանիա մեկնելը].- 1897, գիրք Բ, էջ 15.- (Գեղարվեստական):

575. [ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ նկարչական ուսումնարանի ուսանողուհի Մարիամ Խանթարճյանցը].- 1897, գիրք Բ, էջ 15.- (Գեղարվեստական):

576. [ԳԵՂԱՐՎԵՍՏԻ Կայսերական ճեմարանի նկարչական, ճարտարապետական բաժիններում ու միջնակարգ ուսումնական հաստատություններում սովորող հայազգի ուսանողները].- 1897, գիրք Բ, էջ 15-16.- (Գեղարվեստական):

577. [«ԱՐԱՔՍԻ» 1897թ. Բ գրքում տեղ գտած պատկերները]:

Նորին Կայսերական Մեծությունը; Չաղար Ս. Նշանի վանքը; Վարազա լեռան տեսարանը; Վանա ծովը եւ Սիփանա լեռը; Մոկացի հայ; Խոշապա վանքի Սաչան ջրվեժը; Լեզկ եւ Ամենափրկիչ մատուռը; Բամբակ գգող շատախցիներ; Վանեցի կանայք բամբակից թել են մանում; Վանեցիք կտավ են գործում; Պարսկաստանցի հայ կանայք կապերտ գործելիս; Կիրասոն քաղաք; Ակն քաղաք; Բարձրաքաչ Ս. Գրիգորի վանքը; Աղթամարա վանքը եւ Վանա ծովը; Հանգուցյալ Խաչատուր կաթողիկոս Աղթամարա; Խաչվերացի հանդեսը Աղթամարում; Հաղարծնի վանքը; Վարդապետ նկարող հայ մանուկ; Մկրտիչ Թերլեմեզյանց; Պարսկահայ գյուղացին արտը վարելիս; Ջեթունի լեռները; Վանի բերդը; Վան-Խաչ փողոց; Տրապիզոն քաղաք; Էրզերում; Ջեթուն; Վան քաղաք; Քուրդ հրոսակներ; Եւդոկիա; Անգորա; Անգորայի հայոց եկեղեցին; Սասունցիք; Տիկին Հրաչյա; Ս. մյուռոնի նոր կաթսան; Երեմիա արքեպիսկոպոս; Ս. Հռիփսիմեի վանքը; Թագադրական Պետրոսյան ապարանք Մոսկվայում; Ն.Կ.Մ. հանդիսավոր մուտքը Մոսկվա; Ն.Կ.Մ. Ալեքսանդրա Ֆեոդորովնայի ոսկեկառքը; Ն.Կ.Մ. Կրեմլ ժամանելուն սպասելիս; Մունետիկներ; Ն.Կ. Մեծությանց Կրեմլից դուրս գալուն սպասելիս; Շնորհավորումն Ն.Կ. Մեծությանց; Կայսերական դրոշակը, գայիսոնը եւ կայսեր ու կայսրուհու թագերը; Նորին Կայսերական Մեծությանց Ս. օծումը; Ն.Կ. Մեծությանց տաճարից դուրս գալը; Ն.Կ. Մեծությունը Խոտինկա դաշտի դաստիկոնում; Ն.Կ. Մեծությունը քաղաքային խոհրդարանի մոտ;

Հայկական տիպեր: Կ. Պոլսեցի հայուհիներ-3 նկար; Անդրկովկասյան հայուհիներ իրենց տեղական տարազներով-9 նկար; (Էջա համարից դուրս ներդիրներ); Գեղարվեստական բաժին: Հ. Այվազովսկի-«Տիեզերք»; Հ. Սեմիրադսկի - «Գյուղական կյանքից»; Ե. Բիսսոն - «Ամենդություն»; Ա. Կոտ - «Փոթորկի միջոցին»; Գ. Ում - «Որբիկ»; Ի. Բեռնար - «Սեւաչյա»; Շահին - «Խեղճը»; Դ. Կումինս - «ճիշտ գուշակություն» (Էջա համարից դուրս ներդիրներ); Գեղարվեստական բաժնի բնագրում:

Լեֆլեր - «Երգեցողություն»; Յ. Այվազովսկի - «Մրրկահույզ ծով»; Ս Ստոն - «Պարտիզուն»;

Եւգենիա Թագուհին (Նապոլեոն 3-րդ կինը);

Շապկի երեսներին:

Հայ գեղջկուհի; Ս. Սյուռոնի օրհնությունը; Երեւանի խճուղին Քարվանսարա գյուղի մոտ; Ս. Գայանեի վանքը; Ս. Էջմիածինը լճի կողմից; Գելորգյան ճեմարանը; Սեւանա կղզին; Էջմիածինը լճի եզերքին:

578. [«ԱՐԱՔՍԻ» 1897թ. Բ գրքի բովանդակությունը].- 1897, գիրք Բ, էջ 7-10:

579. ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎ. Ախ, ալ վարդի, սիրո վարդի...: [Բանաստեղծութ.].- 1897, գիրք Բ, էջ շապկի 2-րդ երեսը:

580. ՄՈՃՈՈՅԱՆՅ Պ. Եթե իմ սիրտս էլ բարձր երկնքից...: [Բանաստեղծութ.].- 1897, գիրք Բ, էջ շապկի 2-րդ երեսը:

1898 Թ. ԳԻՐՔ Ա

581. [«ԱՐԱՔՍԻ» 1898թ. Ա գրքի բովանդակությունը].- 1898, գիրք Ա, էջ 3-6:

582. «ԱՐԱՔՍԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ: [«Մեր պայմանները» ընդհանուր խորագրի տակ դիմել է ընթերցողներին ու թղթակիցներին որոշակի պահանջների առաջադրումով].- 1898, գիրք Ա, էջ 7:

583. «ԱՐԱՔՍԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ: [Դիմում է բոլոր նրանց, ովքեր հաշվի չառնելով հանդեսին բաժանորդագրվելու խմբագրության առաջարկած պայմանները, նյութական վնաս են հասցնում «Արաքսին» զգուշացնում է խստիվ պահպանել ընդունված կարգը, խուսափելու համար հետագա թյուրիմացություններից].- 1898, գիրք Ա, էջ 8:

584. «ԱՐԱՔՍԻ» ՓՈՍՏ-ԱՐԿՂ.- 1898, գիրք Ա, էջ 8:

585. ԳՈՒԼԱՄԻՐՅԱՆՅ Ս. Մի քանի խոսք [Հայ մամուլի ուժասպառ, անապահով վիճակը].- 1898, գիրք Ա, էջ 9-14:

586. ՊԱՐՍԿԱՀԱՅՈՅ արդի տազնապալից վիճակի առթիվ.- 1898, գիրք Ա, էջ 15-16.- (Հասարակական խնդիրներ):

587. ՄԻ ՊՏՈՒՅՏ Վանի շրջակայքում /Վարդ.- Վարագ.- 1898, գիրք

Ա, էջ 53-65.- (Տեղագրական). Նաեւ պարերգեր: «Բոքիկ մի քելե Լա-լուխան...»; «Նարե ոստանա բալաք սարեր...»; «Ախպերանց արուն մենջքեարերուն...»; «Խանամեր-խանամեր...»; «Ջան իման, ջան իման...». Նաեւ վանքի գրադարան-թանգարանը, տպարանը, ժառանգավորաց վարժարանը:

588. ՍԱԼՆԱՊԱՏՈՒ Ա. Գրիգոր լուսավորչի վանքը: /Վարդ.- 1898, գիրք Ա, էջ 67-68.- (Տեղագրական):

588ա. ԱՂԹԱՄԱՐ /Վարդ.- 1898, գիրք Ա, էջ 69-79.- (Տեղագրական):

589. ՆԱՐԵԿԻ ՎԱՆՔԸ: [Ս. Գրիգոր Նարեկացի] /Վարդ.- 1898, գիրք Ա, էջ 81-87.- (Տեղագրական):

590. ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ. Սիրուն աղջիկ գետին լինիմ...: [Բանաստեղծութ.].- 1898, գիրք Ա, էջ 88.- (Բանաստեղծություններ):

591. ՀԱԿՈՔ Հ. ՊԱՐՈՆՅԱՆ: [Կենսագրական ակնարկ] /Յ.Յ.- 1898, գիրք Ա, էջ 89-95.- (Կենսագրական):

592. ՍԵՅԼԱՆ: Աբաս թագավոր: [Զրույց].- 1898, գիրք Ա, էջ 97-105.- (Մատենագրական):

593. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՔՈՎՅԱՆ: [Նրա մահվան հիսնամյա տարեդարձի առթիվ].- 1898, գիրք Ա, էջ 106-108.- (Մատենախոսական):

594. БРАТСКАЯ ПОМОЩЬ пострадавшим в Турции армянам. 2-ое вновь обработанное и дополненное издание. М. 1898. (Եղբայրական օգնություն թուրքիայում տուժած հայերին).- Երկրորդ տպագրություն, նորանոր հավելումներով.- Մոսկվա, 1898:

Գրախոս.՝ 1898, գիրք Ա, էջ 109-112.- ((Մատենախոսական):

Տե՛ս նաեւ «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 169-172:

595. Հ. ՎՌԱՄ: Պարսկահայոց վիճակը: [Վերջին տարվա դեպքերի առթիվ].- 1898, գիրք Ա, էջ 131-152:

Բովանդ.՝ Թյուրքաց խարդավանքները Պարսկաստանում.- 97թ. մարտի խառնակությունները Թավրիզում. -Հայոց առաջնորդարանի հարաբերությունները պարսից կառավարության հետ. Սարփարաստության պաշտոնը.- Սալմաստի գաղթականներից գլխահարկ հավաքելը.- Բիզա բեկ.- Պարսից ընդհարումները քրդերի հետ.- Արշավանք մագրոկցի Շարաֆ բեյի վրանների

վրա.- Սալմաստի խռովությունները եւ Շահգադէի ու թուրքաց հյուպատոսի կատարած կեղեքումները.- Վեհեփառ շահի հեռագիրը.- 98թ. փետրվարի վերջին թավրիզում.- Պարսից կառավարության տատանումները.- Կոտուլի հայերի մահմեդականացումը.- Վանի անգլիական եւ Տրապիզոնի ռուսական հյուպատոսները Ատրպատականում:

Ատրպատականի առաջնորդություն.- Սալմաստի առաջնորդական փոխա-
նորդություն.- Ատրպատականի գաղթականներ.- Թավրիզի Կանանց Բարե-
գործական երկու ընկերությունները.- Օտար բարեգործներ.- Մի կտակ թավրի-
զում.- Ատրպատականի ներկա կրթական վիճակը /ուսումնարաններ, մանկա-
պարտեզ, արհեստանոց եւ այլն/.- Թատերական ներկայացումները.- Լսարա-
նական ընկերություն.- Սուլդուզի թրքախոս հայեր.- Պարսկահայ ժողովուրդ:

596. ԿԻՊՐՈՍԻ կրթական որբանոցը. -1898, գիրք Ա, էջ 153-158, տո-
ղատակի ծանոթագր.- (Օրվան հարցեր):

597. ՈՐԲԵՐԻ ԵՒ որբանոցների շուրջ.- 1898, գիրք Ա, էջ 159-164.-
(Օրվան հարցեր):

598. ՇԱՂՈՅԱՆ Ա. քահանա.- Ուրմիո տեղագրության եւ տեղվույն
հայոց վիճակի առթիվ.- 1898, գիրք Ա, էջ 165-169.- (Թղթակցություն-
ներ):

Ուրմիա քաղաք: Գյուղեր՝ Ջամալավա, Գեարդուբադ, Գարազըզ, Ֆախբեկ-
լու, Բաղլադ, Ջեյնալու, Ղըզլ-Աղաջ, Խանբաբախան, Նախիջեւան, Թափե Ատա,
Սյափյուրղան, Ղարաջալա, Գարագեոզ, Իքի աղաջ, Շիրաբաթ, Իսալու, Ռիհվա,
Դիակալա, Աղջագալե, Թեփելու, Խանիշան, Թասմալա, Սարաջուկ, Շումլա-
բաթ, Չամաքի, Չիչաքլու, Ռահիմաբադ.

Բարանդուզի գավառի գյուղերից հիշատակված են Բաբառի, Բելանեժ,
Դարբասի, Դիզաթափե, Թյումաթար, Նորաշեն, Սիաթլու, Սարդարուդ, Սարալու,
Քյուքա:

599. ԱՆՈՓՅԱՆ ՈՐՈՓՐԻՈՍ: Շիկամած արփին հոգնած, դալկա-
հար:... [Բանաստեղծութ.].- 1898, գիրք Ա, էջ 170.- (Բանաստեղծություն-
ներ):

600. ԻՇԽԱՆ ԳՎԻԴՈՆ ԼՈՒՍԻՆՅԱՆԻ կազմած ֆրանսերեն-հայե-
րեն բառարանի առթիվ:

Գրախոս.՝ 1898, գիրք Ա, էջ 171.- (Մատենախոսական):

Հոդվածի վերնագիրը հանված է «Բովանդակությունից»:

601. ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ: [Մահախոսական].- 1898, գիրք Ա,
էջ 172:

Համառոտ. կյանքը ու գիտական-մակավարժական գործունեությունը:

602. Պ. Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆԻ նամակը Բակուրանին ուղղված.- 1898, գիրք Ա, էջ 173-174.- (Ազգային հիշատակարան):

Վերնագիրը հանված է «Բովանդակությունից»:

603. ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՎԱՆՈՒՄ: [Արծանագրում է շուրջ 500-600 տուն. հեղինակի կարծիքով դրա պատճառը դոմինիկյան կրոնավորների տված նպաստներն են հայերին].- 1898, գիրք Ա, էջ 175.- (Այլ եւ այլք):

604. ՎԱՃԱՌՎԱԾ ՀԱՅ ԿԻՆ: [Ուրմիայում «Քրդերի քարվանսարա» կոչված պանդոկում].- 1898, գիրք Ա, էջ 175-176.- (Այլ եւ այլք):

605. ՍՈՎԻՅ ՄԵՌՆՈՂ ՀԱՅԵՐ: [«Oeuvre d orient» ֆրանսիական հանդեսի հաղորդման շուրջը].- 1898, գիրք Ա, էջ 176. (Այլ եւ այլք):

606. [ՌՈՒՍ ԱԿԱՆԱՎՈՐ գրող Ֆ.Դոստոևսկու «Հիշատակարան մեռյալ տանից» վեպի տպագրությունը].- 1898, գիրք Ա, էջ 176.- (Այլ եւ այլք):

607. «ԱՐԱՔՍԻ» ԱԼՔՈՄՆԵՐԸ: [Հանդեսում տպագրված նկարներից կազմված երեք տեսակի ալբոմների ծեռք բերման պայմանները].- 1898, գիրք Ա, էջ 176.- (Այլ եւ այլք):

608. ԱՐԱՔՍ ԳԵՏԻ նոր ընթացքը. -1898, գիրք Ա, էջ 177.- (Այլ եւ այլք):

Վերնագիրն առնված է «Բովանդակությունից»:

609. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ 1500 ռուբլի նվերը.: [Պետերբուրգի հայ եկեղեցական խորհրդի որոշման մասին].- 1898, գիրք Ա, էջ 177.- (Այլ եւ այլք):

Վերնագիրն առնված է «Բովանդակությունից»:

610. ՀԱՅԿԱԿԱՆ երեկույթ Պետերբուրգում.- 1898, գիրք Ա, էջ 177-178.- (Այլ եւ այլք):

Վերնագիրն առնված է «Բովանդակությունից»:

611. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ եկեղեցաց ծխականների ընտրությունը.- 1898, գիրք Ա, էջ 178-180.- (Այլ եւ այլք):

Վերնագիրն առնված է «Բովանդակությունից»:

612. **ԽՍՐԱԳՐՈՒԹՅԱՆՍ** մեջ ստացված են այս հրատարակությունները: [Ներկայացված է 21 անուն հայերեն եւ 11 անուն ռուսերեն գրքերի ցուցակը].- 1898, գիրք Ա, էջ 180-181.- (Այլ եւ այլք):

613. [«ԱՐԱՐԱՏ» կրոնական, բարոյական, գրական, պատմական, բանասիրական, ազգային եւ պաշտոնական ամսագրի ժե տարվա բաժանորդագրության պայմանները].- 1898, գիրք Ա, էջ 182.- (Հայտարարություններ):

614. [«ԱՐԵՒԵԼՅԱՆ ՄԱՍՈՒԼ» կիսամսյա ազգային, գրական եւ քաղաքական հանդեսին բաժնեգրվելու պայմանները].- 1898, գիրք Ա, էջ 182 - (Հայտարարություններ):

615. [«ՔԱԶՄԱՎԵՊ» հանդիսարան գրական, բանասիրական, պատմական, կրթական եւ գիտական ամսագրին բաժնեգրվելու պայմանները].- 1898, գիրք Ա, էջ 182.- (Հայտարարություններ):

616. [«ԿԻԼԻԿԻԱ» փորձ աշխարհագրության արդի Կիլիկիո» գրքի ձեռք բերման պայմանները].- 1898, գիրք Ա, էջ 182.- (Հայտարարություններ):

617. [«ԱՐԱՔՍԻ» նախկին տարիների գրքերը ձեռք բերելու պայմանները].- 1898, գիրք Ա, էջ 182.- (Հայտարարություններ):

618. **ԽՍՐԱԳՐՈՒԹՅԱՆՍ** մեջ վաճառվում են ...[Ներկայացված է 11 անուն հայերեն եւ 4 անուն ռուսերեն գրքերի ցուցակը].- 1898, գիրք Ա, էջ 183.- (Հայտարարություններ):

